ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հիփոթեքային վարկ բնակելի անշարժ գույքի ձեռք բերման նպատակով

Հրապարակվել է՝ 22.04.2025թ.

1	Վարկի հիմնական չափանիշներ	
1.1	Վարկի ձևակերպման վայր	Ձեռքբերվող անշարժ գույքի գտնվելու բնակավայրի (մարզի) (կամ բնակավայրի մոտ գտնվող մասնաճյուղ) և/կամ հաճախորդի փաստացի հասցեով ցանկացած մասնաճյուղ: Մասնաճյուղի բացակայության դեպքում՝ մոտակա մասնաճյուղ հաճախորդի հայեցողությամբ:
1.2	Նպատակային նշանակություն	Գոյություն ունեցող և կառուցվող՝ անձնական նպատակով որպես բնակավայր օգտագործվող բնակելի անշարժ գույքի ձեռքբերում
1.3	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
1.4	Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք[1] (լողացող տոկոսադրույք)	Առաջին 48 ամիսը՝ ֆիքսված 13.3%, 48 ամիս հետո տոկոսադրույքը կարող է վերանայվել +/- 3 տոկոսային կետով
1.5	Տարեկան փաստացի տոկոսադրույք	14.3% Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները՝ • Բանկային հաշվի բացման/սպասարկման վճար • վճարներ այն ծառայությունների դիմաց, որոնք իրականացվում են Բանկի կողմից հաճախորդի ցանկությամբ, օրինակ՝ գրավի գրանցման, սեփականության իրավունքի գրանցման, գրավի ապատման հետ կապված վարկի ձևակերպման միջնորդավճարներ, անշարժ գույքի սահմանափակումների մասին միասնական տեղեկանքի ստացման միջնորդավճար:
1.6	Տարեկան անվանական լողացող տոկոսադրույքի փոփոխում	Լողացող անվանական տոկոսադրույքը հավասար է փոփոխվող տոկոսադրույքի և ֆիքսված կոմպոնենտի գումարին: **Փոփոխվող տոկոսադրույքը՝** ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված համապատասխան արժույթով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը՝ «181 օրից 1 տարի» ժամկետով՝ տասնորդական կետից հետո կլորացնելով մինչև 1 (մեկ) նիշ (Այսուհետ ՄԿՏ): «ՄԿՏ»-ը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքի «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն» բաժնում (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx): **Ֆիքսված կոմպոնենտը՝** Որոշվում է սահմանված անվանական տոկոսադրույքից նվազեցնելով լողացող տոկոսադրույքների վերջին վերանայման ժամանակ արձանագրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված համապատասխան արժույթով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը՝ «181 օրից 1 տարի» ժամկետով: Ֆիքսված կոմպոնենտը փոփոխման ենթակա չէ վարկի գործողության ողջ ընթացքում: **Տոկոսադրույքի վերանայում՝** Տոկոսադրույքը պարտադիր ենթակա է վերանայման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված Փոփոխվող տոկոսադրույքի և գործող Փոփոխվող տոկոսադրույքի տարբերությունը կազմում է 0,5 տոկոսային կետից ավելի: Բանկը տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում: Փոփոխման տոկոսադրույքի մինչև 0,5 տոկոսային կետը ներառյալ փոփոխության դեպքում վարկի տոկոսադրույքը չի վերանայվում: **Լողացող տոկոսադրույքը Բանկի կողմից վերանայվում է տարին 2 անգամ՝ փետրվար 15-ին և օգոստոս 15-ին:** Նշված օրերը ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը՝ հիմք վերցնելով լողացող տոկոսադրույքի հաշվարկման հիմքում ընկած վերոնշյալ ցուցանիշը: Վերանայվելու դեպքում նոր տոկոսադրույքը ուժի մեջ է մտնում վերանայման ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ից: Լողացող տոկոսադրույքների դեպքում անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն չեմը սահմանվում է +/- 3 տոկոսային կետ: **Ուշադրություն՝ վարկի ոչ նպատակային օգտագործման փաստի բացահայտման դեպքում (այլ նպատակներով, քան անշարժ գույքի ձեռք բերում), Բանկը իրավասու է միակողմանի բարձրացնել վարկի տոկոսադրույքը, ինչպես նաև ձեռնարկել այլ միջոցառումներ՝ համաձայն վարկային պայմանագրի պայմանների:**
1.7	Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգ	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ: Ստորև ներկայացվում է տոկոսադրույքի հաշվարկման օրինակ՝ • Վարկի սկզբնական գումար – 10,000,000 ՀՀ դրամ • Վարկի տարեկան տոկոսադրույք – 13.3% Վարկի մասով հաշվեգրվող օրական տոկոսագումարը կկազմի՝ 10,000,000*13.3/100/365=3,644 ՀՀ դրամ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

1.8	LTV (Վարկ/Գրավ) առավելագույն հարաբերակցություն	90%
1.9	Նվազագույն կանխավճար	10%
1.10	Վարկի առավելագույն գումար	ք. Երևանում գտնվող ձեռք բերվող գույքի դեպքում՝ 200 մլն ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան 50 մլն ռուբլուն համարժեք ՀՀ դրամ* ք. Երևանից դուրս գտնվող ձեռք բերվող գույքի դեպքում՝ 140 մլն ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան 40 մլն ռուբլուն համարժեք ՀՀ դրամ* * Փոխարկման փոխարժեքի տատանումից կախված վարկի գումարի առավելագույն արժեքը ՀՀ դրամով ավտոմատ կերպով փոխվում է ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքին համապատասխան, առանց Բանկի գլխավոր
1.11	Վարկի նվազագույն գումար	1,000,000 ՀՀ դրամ
1.12	Վարկի առավելագույն ժամկետ	30 տարի
1.13	Վարկի նվազագույն ժամկետ	3 տարի
1.14	Վարկի մարման եղանակ	Ըստ հաճախորդի ընտրության՝ անուիտետային (ամսական հավասարաչափ) վճարումներ, կամ վարկի գումարի հավասարաչափ մարում գումարած վարկի մնացորդի վրա հաշվարկված տոկոսները (ամսական սպանականձև մարում)
1.15	Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, անկանխիկ
1.16	Վարկի վաղաժամկետ մարում	Վաղաժամկետ մարման մասով սահմանափակումներ չկան: Վարկառուն/ները իրավունք ունի/են՝ - առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել վարկային պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ): Այդ դեպքում Վարկառուն/ները պարտավոր է/են վարկի փաստացի օգտագործված օրերի համար վճարել վարկային պայմանագրով նշված փաստացի տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները: **- վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներից շուտ մարել վարկը: Տվյալ դեպքում Վարկառուի/ների նկատմամբ տուժանք չի կիրառվում, ընդ որում՝** **• ենթակա են նվազեցման վարկի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների, միջնորդավճարների և սպասարկման վճարների ծախսը:** **• ենթակա չեն նվազեցման սույն պայմանագրի պայմանների չկատարմա կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված տուժանքները, վարկի մարման և/կամ տոկոսների վճարման նպատակով կատարված փոխանցումների համար, ինչպես նաև այդ նպատակով բացված հաշիվների սպասարկման համար վճարված գումարները, նոտարական վավերացման, պետական գրանցման (նշված ծառայությունների առկայության դեպքում) դիմաց կատարված վճարները, հավելյալ՝ սույն վարկի հետ կապ չունեցող, վարկառուի ցանկությամբ ընտրված ապահովագրական ծառայությունների դիմաց կատարված ապահովագրավճարները:** **Վարկի ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում ենթակա են վերադարձման նախապես վճարված, սակայն փաստացի չօգտագործված ամիսների/օրերի համար կատարված վճարները:**
1.17	Վարկառուի կողմից պարատավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	**Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումաների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ տարեկան 48% (յուրաքանչյուր ժամկետանց օրացույցային օրվա համար), սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:**
1.17	Վարկառուի կողմից պարատավորությունների չկատարման դեպքում կիրառվող տույժ	**Վարկային պայմանագրով նախատեսված ժամկետներում վարկի մայր գումարը և/կամ տոկոսագումարները չվճարելու դեպքում Բանկն իրավունք ունի դադարեցնել վարկի ժամկետանց մասի նկատմամբ տոկոսագումաների հաշվարկը՝ պահպանելով չժամկետանցված մասի նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը, և ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարների նկատմամբ (մինչև դրանց փաստացի վճարումը) կիրառել տույժ՝ տարեկան 48% (յուրաքանչյուր ժամկետանց օրացույցային օրվա համար), սակայն ոչ ավել, քան ՀՀ օրենսդրությամբ սահմանված տուժանքի առավելագույն չափը, իսկ նշված առավելագույն չափին հասնելուց հետո Բանկն իրավունք ունի վերականգնել վարկի մնացորդի (ներառյալ ժամկետանց մասի) նկատմամբ տոկոսագումարների հաշվարկը:**
1.18	Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքներ	**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐՎԵԼ ՁԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ:** **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (ՏՈՒՆԸ, ՄԵՔԵՆԱՆ ԿԱՄ ԱՅԼ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ: **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝** ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

1.19	Վարկի տրամադրման նախնական որոշման կայացման և հաճախորդին տեղեկացման առավելագույն ժամկետ	1.5 (մեկուկես) աշխատանքային օր
1.20	Երկրորդ փուլով փաստաթղթերի տրամադրման առավելագույն ժամկետ	20 օրացուցային օր՝ հայտի գծով նախնական որոշում կայացնելուց հետո
1.21	Վարկի տրամադրման մասին դրական որոշման գործողության առավելագույն ժամկետ	20 աշխատանքային օր՝ երկրորդ փուլով դրական որոշում կայացնելուց հետո
1.22	Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Մինչև վարկի տրամադրումը գրավի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով և բնակարանի նկատմամբ սեփականության կամ ձեռքբերման իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման: Այսպիսով վարկի տրամադրումը իրականացվում է համապատասխան պայմանագրերը կնքվելուց, նոտարական կարգով վավերացվելուց և պետական լիազոր մարմիններում համապատասխան ձևակերպումներ իրականացնելուց հետո:
2	**Բանկի միջնորդավճարներ**	
2.1	Հայտի դիտարկման միանվագ միջնորդավճար	**Նախատեսված չէ**
2.2	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	0.4% վարկի հիմնական գումարից, առավելագույնը 100,000 ՀՀ դրամ
2.3	Վարկային հաշվի սպասարկման ամսական միջնորդավճար (ամսական միջնորդավճարի հաշվարկը իրականացվում է վարկի տրամադրման օրվանից)	Նախատեսված չէ
2.4	Վարկի ձևակերպման միջնորդավճար (հաճախորդի ցանկությամբ)	
	Գրավի գրանցում (հաճախորդի ընտրությամբ)	ք. Երևան և այլ շրջանների համար (սահմամերձ համայնքներում և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող քաղաքների/գյուղերի համար) 4 աշխատանքային օր՝ 28,000 ՀՀ դրամ (15,500 ՀՀ դրամ) 3 աշխատանքային օր՝ 53,000 ՀՀ դրամ (28,000 ՀՀ դրամ) 2 աշխատանքային օր՝ 78,000 ՀՀ դրամ (40,500 ՀՀ դրամ) 1 աշխատանքային օր՝ 153,000 ՀՀ դրամ (78,000 ՀՀ դրամ)
	Սեփականության իրավունքի գրանցում (հաճախորդի ընտրությամբ)	ք. Երևան և այլ շրջանների համար (սահմամերձ համայնքներում և բարձր լեռնային բնակավայրերում գտնվող քաղաքների/գյուղերի համար) 4 աշխատանքային օր՝ 47,000 ՀՀ դրամ (25,000 ՀՀ դրամ) 3 աշխատանքային օր՝ 72,000 ՀՀ դրամ (37,500 ՀՀ դրամ) 2 աշխատանքային օր՝ 97,000 ՀՀ դրամ (50,000 ՀՀ դրամ) 1 աշխատանքային օր՝ 172,000 ՀՀ դրամ (87,500 ՀՀ դրամ)
	Գրավից ազատում (պարտադիր)	2,000 ՀՀ դրամ
2.5	Անշարժ գույքի սահմանափակումների մասին միասնական տեղեկանքի ստացում (հաճախորդի ցանկությամբ)	Միասնական տեղեկանքի տրամադրման ժամկետ (ընտրվում է հաճախորդի կողմից) 1 աշխատանքային օր՝ 23,500 ՀՀ դրամ 2 աշխատանքային օր՝ 13,500 ՀՀ դրամ
2.6	Նոտարական ծառայության դիմաց միջնորդավճար	10,000–25,000 ՀՀ դրամ
3	**Ապահովություն և ապահովագրություն**	
3.1	Գրավի առարկա	Ձեռք բերվող անշարժ գույք (կարող է պահանջվել նաև լրացուցիչ գրավ)
3.2	Անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատում	Վարկի տրամադրման պահին հիմք է ընդունվում անշարժ գույքի գինը համաձայն տեղեկանքի կառուցապատողից: Կառուցապատման ավարտից հետո անշարժ գույքի գնահատումն իրականացվում է Բանկի կամ անկախ գնահատող ընկերության կողմից (հաճախորդի ընտրությամբ) 100% ավարտվածությամբ անշարժ գույքի սեփականության վկայականը ստանալուց հետո՝ այն Բանկում գրավադնելու ժամանակ: Անկախ գնահատող կազմակերպության մասով անհրաժեշտ տեղեկությունները (այդ թվում՝ գնահատողների ցանկը, անվանումները, գտնվելու վայրերը, հեռախոսի համարները) կարող եք գտնել Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/about-bank/partner հասցեով:
3.3	Գույքի ապահովագրություն	Ապահովագրումը իրականացվում է Բանկի կողմից՝ գույքի գնահատված շուկայական արժեքի չափով, մեկ տարի ժամկետով, բացառապես Բանկի կողմից հավատարմագրված ընկերություններում: Ամեն հաջորդող տարում վերաապահովագրվում է ևս մեկ տարով: Վերջին տարվա համար ապահովագրությունը կատարվում է վարկի մնացած ժամկետի համար: Գույքի ապահովագրության պայմանները ներկայացված են Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/insurance/real-estate հասցեով: Ապահովագրական ընկերությունների մասով անհրաժեշտ տեղեկությունները (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների ցանկը, անվանումները, գտնվելու վայրերը, հեռախոսի համարները) կարող եք գտնել Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/about-bank/partner հասցեով:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

3.4	Անձնական ապահովագրություն	Ապահովագրվում է աշխատունակության կորուստ դժբախտ պատահարի հետևանքով վարկի մնացորդի չափով (ապահովագրվում են հաճախորդը և հաճախորդի հետ վարկի մարման համար Բանկի նկատմամբ հավասար պատասխանատվություն կրող անձինք (եկամուտներին համապատասխան): Անձնական ապահովագրության պայմանները ներկայացված են Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/insurance/loan-accidents հասցեով: Ապահովագրական ընկերությունների մասով անհրաժեշտ տեղեկությունները (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների ցանկը, անվանումները, գտնվելու վայրերը, հեռախոսի համարները) կարող եք գտնել Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/about-bank/partner հասցեով:
4	**Վարկառուին/Համավարկառուին ներկայացվող պահանջներ**	
4.1	Կարգավիճակ[3]	ՀՀ ռեզիդենտ՝ անձը հաստատող փաստաթղթում նշված մշտական գրանցման կամ փաստացի բնակության հասցեով:
4.2	Համավարկառու (քանակը երկու անձից ոչ ավել)	Ֆիզիկական անձ՝ վարկառուի ամուսին (կին), կամ ծնողներ, չափահաս երեխաներ, եղբայրներ, քույրեր, եղբայրների/քույրերի կանայք/ամուսիններ, ամուսնու/կնոջ ծնողներ, ամուսնու/կնոջ քույրեր/եղբայրներ, հորաքույրներ, մորաքույրներ, մորեղբայրներ, հորեղբայրներ, վարկառուի հետ ապրող այլ բարեկամներ:
4.3	Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Բանկի ներքին իրավական փաստաթղթերի համաձայն
4.4	Ընդհանուր աշխատանքային փորձ	1. Անընդմեջ ստաժ աշխատանքի վերջին վայրում վերջին 4 ամսվա ընթացքում: Տվյալ պայմանը չի պահանջվում սահմանված գործունեության ոլորտների2 աշխատակիցների համար այն դեպքում, եթե վերջին աշխատանքային վայրում աշխատավարձը նախորդից քիչ չէ: 2. 1 (մեկ) տարուց ոչ պակաս ընդհանուր աշխատանքային ստաժ: Աշխատանքային ստաժը չի պահանջվում միայն «1000+» հիմնադրամի հատուցման գումարներից ստացած եկամուտների հիման վրա հայտերի դեպքում:
4.5	Վարկառուի տարիք	Վարկառուի տարիքը վարկ ստանալու պահին պետք է լինի 21 տարեկանից ոչ պակաս, իսկ վարկը մարելու պահին չպետք է գերազանցի թոշակի անցնելու տարիքը:
5	**Լրացուցիչ պայմաններ**	
5.1	**Վարկային ծառայությունից օգտվելու համար հաճախորդը Բանկում պետք է ունենա բանկային հաշիվ:**	
5.2	Բանկային հաշիվների բացում/վարում	Համաձայն Բանկի սակագների, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/accounts-and-payments հասցեով:
5.3	Վարկային հաշվի գծով քաղվածքի/տեղեկանքի տրամադրում	"ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ գործող "Բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագների" համաձայն, որոնց կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.vtb.am/am/deposit/bank-account-1 հասցեով:
5.4	**[1] Բանկում աշխատավարձ ստացող հաճախորդների համար սահմանված են վարկի արտոնյալ տոկոսադրույքներ:**	
5.5	[2] Գործունեության ոլորտներ. • Հանքագործական արտադրություն էլեկտր. գազի մատակարարում • Մշակող արդյունաբերություն, արտադրություն • Տեղեկատվություն և կապ • Կրթություն • Առողջապահություն և սոց. ոլորտ • Պետական և համայնքային կառավարում • Բանակ և ուժային կառույցներՀանքարդյունաբերություն և մետալուրգիա • էներգետիկա և գազ • Ֆինանսներ, բանկեր և ապահովագրական գործունեություն	
5.6	[3] Վարկավորումը անհնար է, եթե վաճառողը և գնորդը հանդիսանում եմ մեկ ընտանիքի անդամներ	
Բնակելի անշարժ գույքի ձեռք բերման նպատակով տրամադրվող վարկի համար Վարկառուից/Համավարկառուից առաջնային փուլում պահանջվող փաստաթղթերի ցանկ		
1	Պատշաճ կերպով լրացրած Դիմում-հայտ	
2	Անձը հաստատող փաստաթուղթ - ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձնագիր կամ նույնականացման քարտ, ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ: ՀՀ քաղաքացու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ) կամ նույնականացման քարտ*, բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք Եթե Վարկառուն/Համավարկառուն ամուսնացած է, ապա նաև կնոջ/ամուսնու փաստաթղթեր * Նույնականացման քարտի ներկայացման դեպքում պարտադիր է հանրային ծառայությունների համարանիշի առկայությունը նույնականացման քարտի վրա	
3	Կառուցապատողից ձեռք բերելու դեպքում՝ տեղեկանք կառուցապատողից (որտեղ նաև նշված է գույքի արժեքը և հասցեն, քառակուսին, կառուցապատողի ՀՎՀՀ-ն):	
4	Եկամուտները հաստատող փաստաթղթեր պահանջվում են միայն այն դեպքում, եթե վարկառուն աշխատավարձը ստանում է ոչ "ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ-ի միջոցով:	
5	**Անհրաժեշտության դեպքում Բանկի կողմից կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:**	

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

Ուշադրություն՝
Հաճախորդի վարկային հայտը մերժվում է, եթե՝
- **Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր,**
- **Հաճախորդը չի բավարարում Բանկի նվազագույն պայմաններին,**
- **«ԱԲՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները/Երաշխավորները) ունի բացասական վարկային պատմություն,**
- **Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը վարկունակ չէ,**
- **Վարկավորման գործընթացի արդյունքում հաճախորդի վերաբերյալ հայտնի է դարձել այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկության հավաստիությունը:**

Ուշադրություն՝
Ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով, տեղեկատվություն վարկ տրամադրելու որոշումների կայացման համար կիրառվող վարկարժանության գնահատման եղանակների վերաբերյալ (վարկային պատմություն, վարկային սքոր), այդ թվում՝
ա. Վարկային պատմության էությունը, կարևորությունը, ինչպես է այն ձևավորվում, ինչ տեսակի և ինչ վաղեմության տեղեկատվություն է պարունակում, ինչ պետք է անեն սպառողները սխալ կամ թերի վարկային պատմությունը փոփոխելու համար և այլն, ինչպես նաև հղում www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
բ. Վարկային սքորի (կիրառելու դեպքում) էությունը, կարևորությունը, ինչ տեսակի վարկային սքոր է կիրառվում ֆինանսական կազմակերպության կողմից (Ֆայկո, ԱԲՌԱ, սեփական սքոր գնահատական, թե այլ): Սեփական վարկային սքոր կիրառելու դեպքում տեղեկատվություն սքորի հաշվարկի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոնների (օրինակ՝ գործող վարկերի գումար և քանակ, վարկային պատմության երկարություն, վարկային հարցումներ, ժամկետանց վարկեր և այլն) և դրանց ազդեցության ուղղության (բարձրացնում է, թե իջեցնում է սքորը) վերաբերյալ: ԱԲՌԱ կամ Ֆայկո սքոր կիրառելու դեպքում տեղադրվում են հղումներ www.abcfinance.am և www.acra.am կայքերի համապատասխան էջերին:
գ. Ինչ քայլեր կարող են ձեռնարկել սպառողները իրենց վարկային պատմությունը և սքորը բարելավելու համար (օրինակ՝ մարել գործող վարկերի մի մասը, բացառել գործող վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայությունը), ինչպես նաև ինչ գործողություններ չպետք է անեն վարկային պատմության և սքորի վատթարացումից խուսափելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍ ԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ՝ https://www.vtb.am/NewVersion/uploads/ampopagrer/Credit/APY_arm.pdf ՀՂՈՒՄՈՎ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՎԱՐԱԿՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է
Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար վանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով: